

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՅԻԿ ԹՂԹԱԿՑՈՒԹՐԻՆ
ՊԵՏՐ Ե ՌՂՂԱՆ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագրիներն եւ չեն դարձուիր
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՆԵՆԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇՄԱԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գանձիւրի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից »	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏՕՆԱՏԷՐԻ ՉԱՐՄ		
Տարեկան	Ֆրանկ	18
Վեցամսեայ	»	10

ԹՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎԱՍԹ ԶԱՐՄ		
Տարեկան	րուբլի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԵԸ ԿԱՆԻԿ Է
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԵՄԻՔԸ
Թերթին վարչութեան վրայ է

ԶՈՐԵՔՇՄԱԹԻ 1/14 ՆՈՅՄԲԵՐ

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 46

ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ ՏԱՐԻՈՅ ՕԳՈՍՏՈՍԻ 14-էն
ՄԿՍԵԱՎ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՃՏՈՆԱԿԱՆ
ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՄԱՅՈՒ-
ՅԻՉ ՏԻՍԱ ՄՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈ-
ՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի
ԸՆԿԱՂԱՔԻՆԵՐՆ ԱՆՎԱՅԵՐ ԿԸ ՆԿԱՏ-
ՈՒԻՆ:

ՄԱԿԵԴՈՆԻԱ-ԱԻՍՏՐԻԱ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Վերջապէս Աւարիա որոշած է
Պոստիոյ երկաթուղոյ զիծը երկարել
մինչև Նովի Պազարի սահմանագրու-
լը և անկէ՛ անդին դէպ ի Մակեդո-
նիա:

Եթէ սոյն վերջոյն համար թուրք
կառավարութիւնն ալ հաւանութիւն
տայ ու երկուտեք համաձայնութիւն
գոյանայ, մէկ քանի ժամերու մէջ
Սէլանիկէն՝ Վիեննա և Վիեննայէն՝ ուղ-
ղակի Սէլանիկ երկաթուղով պիտի
երթնեկուի:

Անշուշտ վիեննայի զբօսաշրջիկ-
ներուն բաւական հաճոյք պիտի կըր-
նայ պատճառել սոյն երկաթուղով
ճամբորդելը. որովհետև անոնք Սէ-
լանիկը պտըտելէ աւելի՛ թիրևս ա-
խորժին իրենց երթնելու ժամանակ
միջոցին ճամբուն վրայ հանդիպած բնու-
թեան զմայելի տեսարաններէն, ա-
խորժելի գիւղերէն, գիւղաքաղաքնե-
րէն, գաշտերէն ու կանաչներէն:

Ոչ ոք կրնայ ուրանալ կուզտայի,
Տանայի և չրջականերու աննըման
զերբերը, աղբիւրներն ու ծառուղի-
ները, զորս պիտի կտրէ անցնի ապա-
գայ երկաթուղին:

Սոյն երկաթուղին՝ առևտրական և
վաճառականական տեսակետով եր-
կուտեք մեծ գիւրութիւններ պիտի
կրնայ ընծայել. Սէլանիկ և Վիեննա
մէկ քանի ժամուան մէջ իրենց ապ-
րանքները պիտի փոխանակեն առանց
գժուարութեան. ճամբորդներու եր-
թնելու ժամանակ առևտրական մեծ ոգե-
րութիւն մը յառաջ պիտի բերէ:

Գալով քաղաքական և զինուորական
տեսակետով այդ երկաթուղոյն ըն-
ծայելիք օգուտներուն, հոս Աւարիա

և թուրքիա, Մոնթենէկրո և Սերպիա,
մինչև իսկ Ռուսիա իրարմէ տարբեր
շահագրգիռներով կ'ընթանան. զոր
օրինակ, թուրքիոյ գործին շատ լաւ
կուզայ այդպիսի երկաթուղոյ մը
շինութիւնը, որովհետև 1896ին Հել-
լենական պատերազմին ժամանակ
փորձով տեսաւ թէ որքան գժուարու-
թեամբ պիտի փոխադրուէին Օսման-
եան բանակին զօրքերը և պաշար-
ները եթէ Սէլանիկի և Պոլսոյ միջև
ուղղակի երկաթուղոյ գծի մը գոյու-
թիւնը ստեղծուած էր:

Բնական է թէ Սուլթան Համիտ՝
որոյ թագաւորութեան օրով և անոր
նախաձեռնութեամբ շինուեցան այդ
երկաթուղիները՝ այնքան տխմար չէ
չը կշռելու թէ՛ ինչ որ պատահեցաւ
1896ին թեւաւրոյ մէջ, նոյնը պիտի
կրնայ պատահիլ օր մը, ամիս մը
կամ տարի մը վերջը Մակեդոնիոյ
մէջ:

Նամանականը որ Մակեդոնական
յեղափոխական գոմիթէները, թուրք
կառավարութեան ահ ու սարսափ աղ-
ղելու մէջ՝ Հայ յեղափոխական գո-
միթէներէն վար չեն մնար, և աւելի
պիտի սաստկանայ թուրքին երկիւղը
եթէ ճիշդ է այն պաշտօնական յայ-
տարարութիւնը զոր Մակեդոնական
գոմիթէները հրատարակած են ըսե-
լով թէ՛ «Ոչ յոյն գոմիթէներուն և ոչ
ժէճն-թուրքերուն հետ համաձայ-
նութիւն պէտք չէ յուսալ, ի բաց
առեալ Հայ յեղափոխական գոմիթէ-
ներն, որոնք լիովին վստահութիւն
կը ներշնչեն յեղափոխութեան»:

Սուլթանը ասոնք չը մոռնար ար-
ձանագրելու և հետևաբար կրնայ ըմ-
բոնել որ եթէ Մակեդոնիոյ մէջ ան-
գամ մը յեղափոխութիւնը պայթի ու
տարածուի չրջակայներուն մէջ, որ-
քան պէտք պիտի ունենայ այդ երկա-
թուղին ոչ թէ ապստամբները զսպելու,
հապա ապստամբութենէն օգուտ քա-
ղելով ոտքի ելնող զբաղի ազգերուն
դէմ իր բանակին զօրք և պաշար
հասցնելու համար. ո՛չ ապաքէն Մա-
կեդոնական յեղափոխութիւնը հոչա-
կուելուն պէս, Պուլկար, Սերպ, Մոն-
թենէկրո, և Աւարիա իրար պիտի
խառնուին. ինչպէ՛ նաև Հայը:

Ուրեմն սոյն երկաթուղոյ շինու-
թիւնը ո՛չ միայն թուրքին՝ հապա

նաև սոյն վերջիններուն ալ օգտակար
եղած կ'ըլլայ կոր, նամանականը Աւր-
տրիոյ՝ որ ամենէն մեծ դերը կու-
ուած է խաղալ Մակեդոնիոյ մէջ՝
եթէ Գերմանիա օր մը զինքը կու-
չի տայ:

ՄԱՏՈՒՌԻ ԹԷ ՈՐԲ

«Նոր Օր»ի 37 թուով «Փարիզի
Հայ Մատուռ և Պ. Մանթաշեանց»
խմբագրականի մէջ մեր ըրած դիտո-
ղութիւնները հաստատող հետևեալ
յօդուածը կարտատպենք «Շաւիղ»էն:

Ժամանակ մը ի վեր Բարիզի հայ
թականութեան մէջ մատուռի մը հարցը կը
ծնուի, որուն արձագանգ կը հանդիսանայ
հայ լրագրութիւնը: Հայերը կուզեն որ
իրենց մասնաւոր ազօթատեղին ունենան
աշխարհի ոտանիկն մէջ: Այս փափաքին
արտայայտութեան մէջ աւելի ազգային ար-
ժանապատուութեան զգացման մը ինդիքը
փնտրելու է քան բարեպաշտիկ արամազ-
րութիւններու պահանջ մը. ասիկա ըսել չէ
թէ Բարիզի հայերը ամբարիշտ մարդիկնե-
րն. քաւ լիցի. բայց մարդու կրօնական
ձգտումները իրենց զոհացումը կրնան զբո-
նել անապատին մէջ իսկ, կը բաւէ որ նիւ-
թին կոշտ արտաքինը անհրաժեշտ չլլայ երկիւ-
ղած մեծարանքը միտուեցանելու համար Աս-
տուծոյ ու մեղքերուդ քառութիւնը գտնելու
համար:

Հիմակ, այս փափաքը մտ և իրակա-
նութիւն գտնելու, վասն զի մեծահարուստ
ոռուահայ մը, Պ. Աղեքսանդր Մանթաշեանց,
խոստացեր է հոգալ բարեգեան հայ մա-
տուռի մը շինութեան ծախքին մեծ մասը,
որով շատ հաւանական է որ ասիկց քանի
մը տարի ետքը Բարիզի հայերը իրենց սե-
փական ազօթատեղիին մէջ Աստուած փա-
ռարանելու բախտն ունենան:

Սակայն, մատուռ բողոքի համեստ կազ-
մութեամբը երբեք չի հաշտուիր մեծութեա-
նը հետ այն գումարին, որ պիտի յատկացուի
եղեր անոր կառուցմանը. մէկ միջոցն
Քրիստի: Ուրեմն, Բարիզի հայերը ոչ մի-
այն սեփական ազօթատեղի մը կուզեն,
այլ և կուզեն որ իրենց ազօթատեղին հա-
մեստ մատուռ մը ըլլալէ աւելի՛ ծարտարա-
պետական գեղեցիկ յիշակերտ մը ըլլայ,
ազգի մը կրօնական ըմբռնումներուն վրայ
բարձր գաղափար մը ներշնչող:

Եթէ Բարիզի հայերուն ուզածը մատուռ
մըն է, ինչո՞ւ մէկ միջոցն ֆրանք յատկա-
ցնել անոր շինութեանը. այդ գումարով,

նոյն իսկ Բարիզի մէջ կարելի է բաւական
շքեղ եկեղեցի մը կանգնել: Բարիզի հա-
յերը միշտ մատուռի վրայ կը խօսին, ու
մատուռ մը կրնայ կառուցուիլ երկու հար-
ուր հազար ֆրանքով, Բարիզի եկրորդական
մէկ կէտին վրայ, ու անիկա դարձեալ բա-
ւական պատուարեր շէնք մը կրնայ ըլլալ:

Մեզի պէս աղքատ ու հարստահարուած
ազգ մը, որ իր ճիտէն կախուած ունի հա-
զարաւոր սովահար ու մերկ որբեր, ինչպէս
պիտի յանդգնի մէկ միջոցն գումար մը ու-
րին ջուրին թափել մայրաքաղաքի մը սա-
լարին վրայ, կրօնական շինարար մը համար
միայն: Որ պէտքերնուս զից գարման չը-
լար այդ պատկանելի գումարը, որուն կէ-
տովը միայն քսան որբանոց կրնայ բացուիլ
Երուսալէի մէջ կամ Հայաստան: Անօգնա-
բան է, օրինակի համար, Երուսալէի աղատ
մէկ հողին վրայ, Զուլիգերիոյ մէջ, հիմնել
որբերու յատկացուած եկրորդական վարժա-
րան մը, որ նախադուր ըլլայ երուսալէական
բարձրագոյն ուսումնարաններուն: «Հայաս-
տան սովատանջ» ի աղիողորմ աղաղակնե-
րուն ալանջ խփելով հարիւր հազարաւոր
ֆրանքներ զբիթէ քմածին նպատակներու
խորելը ազգային արժանապատուութեան ա-
ւելի քան չի՛ բերեր քան Բարիզի մէջ
հայկական մատուռի մը բացակայութիւնը:

Ժամանակ մը կ'այսպէսնէինք մեր ազգա-
յին այն հին բարեբաղնները, որոնց բանը
գործը ժամ շինել էր՝ հոգիներուն փրկու-
թեանը համար, բնաւ չմտածելով որ իրենց
հոգին մեծագոյն հաւանականութեամբ աւելի
փրկուած կ'ըլլար եթէ եկեղեցիի տեղ զբո-
րոց շինէին. և զուցէ ազգին միեակը հիմակ
բոլորովին տարբեր հանգամանք մը առած
կ'ըլլար: Արդ, Բարիզի լուսամտ հայերը մեր
հին բարեբաղններուն գրութեանը պիտի հե-
տեին՝ զպրոցի կամ որբանոցի տեղ ժամ
շինելով:

Պ. Մանթաշեանց առատաձեւն հայ մըն
է. Բարիզի հայերը եթէ ուզեն կրնան աւելի
կենսական պէտքերու ծառայեցնել անոր բա-
րի տրամադրութիւնները: Մէկ միջոցն ֆը-
րանքին մէկ մասովը կարող են ունենալ
իրենց մատուռը, համեստ ազգի մը հա-
մեստ ազօթատեղին, ու մնացած գումարը
աւելի նպատակայարմար գործածութեան մը
յատկացնել:

Բարիզի գաղթականութիւնը, որ մեծա-
գոյն մասամբ լուրջ և ազնուամտ հայերէ կը
բաղկանայ, պիտի ուզէ արդեօք անդրադառ-
նալ այս փափուկ խնդրին, որուն լուծումը
այնպէս ինչպէս մենք կը մտածենք՝ կրնայ
անհամար բարեբաղն արտադրել զժբաղը
ազգերնուս համար:

ՊՈՒՍԱԿԱՆ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ
ԲԱՆԻ ՍԱՌՆՈՒՇ

Առ Տ. Կ.

Բայի սառնուշ
Այո՛, անգամ մը ես, բայի սառնուշ. բան մը չէր հասկնար, կ'երևակայեմ, հոգ չէ՛. լայն ներողամտութիւն մը կ'զգամ ձեր չղի- տանքին հանդէպ և չեմ ալ մեղադրեր ըզ- ձեզ, որովհետեւ, պատճառը շատ պարզ է. ասկէջ հինգ ու կէս տարի առաջ, ես ալ ձեզի պէս չեմ հասկցած այդ երկու բանին նշանակութիւնը և գերապայծառ ապշութեամբ մը աչքերս գարձուցած եմ պանոնը արտա- սանողին երեսն ի վեր, երես մը, որ լուս- նին կը նմանէր, սա տարբերութեամբ որ գիշերուան թաղուհին՝ ամուսն միայն կէսը կը տեսնէի իսկ Վիրժինի մինն գիշեր:

Վիրժին . . . սովորական անուն մը, բիշ մը տակալ, չափն աւելի banal, կ'ըն- գունիմ, բայց ինքը մարգարիտ մըն էր, հաւատացէք, խեղճ, բարի աղջիկը:

Յիշիջական և բարոյական ամեն յատ- կութիւնները առատօքն, շոյքօքն տրուած էր իրեն Նախախնամութեան կողմէ. միայն հայրը նախախնամութեան պէս չէր շարժեր, այդ ֆիզիքական ու բարոյական առաւելու- թիւններուն վրայ բարդելուն՝ իւրականը նաև որով, այդ հէզ աղջիկը դեռ չէր կրցած ա- մուսին մը գտնել իր բուն և մէկ տարե- կան հասակին մէջ ուր ճանչցայ զինքը:

Չգայուն՝ ինչպէս ներքի է ըլլալ բուն և մէկ տարեկան աղջկան մը, Վիրժին իր փո- թորկալջ վայրկեաններուն մէջ, Շարժիչէի ճամբորդներու նման, գերան մը փնտած էր որուն կարելի ըլլար փաթթուիլ:

Այդ գերանի գերն էր գոր կատարեցի իր բով՝ առանց չորս ամիս շարունակ:

Մի հարցնէք, կ'աղաչեմ, թէ երբ, ո՞ւր, կամ ի՞նչպէս սկսաւ մեր սիրահարութիւնը:

Աշխարհի ամեն կողմը և իր ստեղծ- մանէն ի վեր, ամեն ցեղի, ամեն ազգի մէջ և ամեն կլիմայի տակ, սիրահարու- թիւնները միևնոյն ձևով կ'սկսին և միևնոյն ձևով կը վերջանան:

Առաջին անգամ որ սիրտդ աղջկան մը կը բանաս՝

— Պարոն, ես ձեր գիտցածներէն չեմ, կը պատասխանէ ձեզի: Ասիկայ ամեն սիրա- հարութիւններու ալժան է, իսկ օմէղան՝

— Ոտքդ պահեմ, մարդու բան չ'ըսես: Հակառակը պնդողին՝ արքայութեան մէջ ունենալիք տեղս ընծայ կ'ընեմ իրեն:

Վիրժինի հետ մինչև այդ ծայրայեղու- թիւններուն հասած չէինք բարեբաղդարք:

Ընդհակառակը մեր բաժանումը տարօրի- նակ պայմաններու տակ կատարուեցաւ ու- րուն մանրամասնութիւնները աւստիկ:

* * *

Չէ՛ տրուած ձեզի համարիլ աղջկան մը և բանի մը ժամանակ ետքը բոլորովին պա- ղիլ անորմէ իր մէկ անմեղ և պզտիկ պա- կասութեան համար:

Մարդիկ կան որ չեն կրնար սիրել աղ- ջիկ մը որ շարունակ եղունգները կը կրծէ և կամ անշնորհք ակնացունց մը սնի. ու- րիշներ չեն ակործիր այն աղջիկներէն որ կէս ժամուան մէջ բուն անգամ ծնրակապը վեր կը քաշէ ինչչին վրայէն. անշուշտ կան ինձմէ գատ ուրիշներ ալ որ գարշանքի պէս բան մը կ'զգան գեղեցիկ սեռի այն ներկա- յացուցիչներէն որոնք քաղաքական տեսու- թիւններ կ'ընեն ձեզի Չինական և կամ Թրանսպալի ինդիաններուն վրայ:

Երանի թէ Վիրժինի յանցանքը կամ պակասութիւնը ասոնց պէս ըլլար: Չէ՛, ա- նորը՝ յանցանք մըն էր ահագին, անսովոր, վրդովիչ, անմեղիկ, անտղք, սոսկալի և յուսահատեցնող որ չես կրնար բացատ- րել, չես հասկնար և չես ներեր:

Անագործին կերպով աշխարհաբար կը խօսէր ան, աշխարհաբար մը որ անձնաս- պանութեան կը մղէ մտիկ ընողը:

Ես գիտեմ ինչ բաշեցի տասնը չորս ա- միս շարունակ այդ աշխարհաբարին ձեռքէն:

Աշխարհաբար մը՝ կուսութեան պէս մա- թուր, Չեմզբլէնի Քիլլորէն անցած, յո- տակ, պայծառ, շաքարի պէս սիրտ անուղ աշխարհաբար մը որ զլիս պտոյտ կը պատճառէ շոգենալի տատանոցին պէս, որ քրտինք կուտայ ճակտիկ և մարելիք սրտիդ:

Տարի մը և երկու ամիս շարունակ, օրը գրեթէ միջին հաշուով երկու ժամ խօսակցած եմ իրեն հետ և այդ ութ հարիւր բառա- սուն ժամերուն մէջ բազմը չունեցայ տես- նել իր շրթներէն՝ օտար բառի մը դուրս գալը և ըսել թէ հիմապի կերպով ֆրան- սերէն գիտեր, ինչպէս նաև տաճկերէն և յունարէն:

Ես ատանկ անսխալականութիւն ոչ ոքի բով տեսած եմ:

Հինգ ու կէս տարի անցած է այդ օրե- րէն ի վեր, դարձեալ այդ աշխարհաբարին յիշատակը խճտուքներ կ'արթնցնէ ակնալիս մէջ և կը զարմանամ թէ ինչպէս կրցած եմ տասնը չորս ամիս անգաղար տոկալ այդ լեզուաբանական ՏՈՂԻՆ:

Բայց որքան ըսեմ, նորէն չէր կրնար գաղափար մը կազմել Վիրժինի այդ մտու- թեան վրայ, կարելի չէ:

Ամեն անգամ որ ծունկի ծունկի կը խօ- սակցէինք իրեն հետ, կարծես ներկայ կը գտնուէի սինեմաթեատրի տեսարանի մը ու- րուն մէջէն և իբրևու ետև կ'անցնէին Նա- րեկացին, Ազաթանգեղոսը, Շնորհալին, Վե- նետիկի վանքը, Վիլենայի միաբանութիւնը, Էջմիածինը, Գարաբաղեանը, Գուրգէնը, Լամբրոնացին, Չամբրճի պատուելին, Սի- պիլի, Հայրիկը . . . Սիմօն Գափամաճեան:

Գասաբանի մը մէջ, եկեղեցին, խմբա- գրասան մը և կամ Պատրիարքարանի սե- մին վրայ այդպիսի պատկեր մը կը հաս- կրնամ թէ բան մը ունենայ իր մէջ սփո- փիչ, գեղեցիկ և յուսատու:

Բայց սիրաբանութեան միջոցին, երբեք:

Ատեն մը եկաւ որ ալ Վիրժինը գաղ- րած էր ինձ համար աղջիկ մը ըլլալ. ան՝ բերականութիւն մըն էր սոսկ, մաղթանք մը, շարական մը, կոնգակ մը, կորնթաց- ւոց թուղթ մը, Եղիշէն հատուած մը, ալ ինչ գիտնամ:

Վիրժին . . . allons donc. Վիրժին չէր ան, այլ բառարան մը, Հայկազեանը, որ ոչ առձեռն կրնայ ըլլալ և ոչ ալ. . . ծոցի: Հակառակ այս երկարապատում մանրա- մասնութիւններուն նորէն գուր գաղափար մը չի կրցաք կազմել անոր այդ քրեական յանցանքին վրայ:

Չեղի աւելի շօշափելի օրինակներ տամ և դուք ալ պիտի համոզուիք թէ անտանելի էին տանջանքները որուն ենթարկուած էի հինգ ու կէս տարի կայ:

Ամեն բանէ առաջ և ամեն բանէ վեր աննկարագրելի կերպով կը յուզուէի, կը բարկանայի և կը գանձէի երբ ամեն վայր- կեան, ամեն պարագայի մէջ Պարոն ա- ծականը կուտար ինձի:

— Չէ՛ պարոն, այո՛ պարոն, մեզ կը գիտեն կոր պարոն, զգուշութիւն պարոն, մի սեղմեր պարոն, հիմայ ըլլար պարոն, սեֆ, ցաւուցիլ պարոն, ինչու չէ պարոն:

« Պարոն » ամեն ասեն, անգաղար, յա- կտեան պարոն:

Ո՛վ կը հանդուրժէ ասոր, ըսէք:

Ամեն անգամ որ այդ « պարոն » անակար կուտար, կարծես լուսարարի շապիկ մըն էր որ ուտերէս վար կը սահեցնէին:

Միշտիւ բուրբ էրեն համար այլանգա- կութիւն մըն էր և ԵՄԵԼԵՏԻՆ սրբապղծու- թիւն մը:

Բնաւ անկան մը չի տալու շնորհն ան- գամ չէր ընէր ինձի:

Այդ պարոնին ձեռքէն կեանքը լեղի կը դառնար ինձ համար:

Լուի բեկ քաղցնին՝ Լուկովիկոս Հին- գետաաներորդ կրուկ, Ժառը-քիւնին՝ ծնրակապ, Բորսէին՝ սեղմիբանա, ասորք վերջապէս ներքի են, այն ալ աստիճան մը. բայց գասրուած սմբուկ ըսել եայալմնի ՏՈՂԻՆ, զգամ՝ մեր գիտցած լուսար- նաին, վտաւակ՝ խորհրդաւոր միւսին, ո՛հ, ո՛հ, մարդ չի հանդուրժեր, չի պիմա- նար, կը մեռնի:

Իրեն թէ իր գիտցած բառերը բուսական չըլլային, չի գիտցածներն ալ ինք կ'սանդ- ձեր, ֆրանսերէն կամ թրքերէն բառ մը իսկ չի փախցնելու համար:

Օր մը կ'զգէին շոգենալին մէջ՝

— Երկայնասեր ինձի կ'անցնէք, կ'ա- ղաչեմ, ըսաւ:

Երկայնասեր՝ langue-vueին համար . . . c'est dégoûtant:

Դեռ ո՞րը գրեցեմ, շա՛տ:

Պիտի ներկի իրեն որ այդ մաքուր, անա- պակ հայերէնը գործածել եթէ սիրաբանե- լու պատեհութիւնը ունենար հայկաբան վար- ժապետի մը և կամ կնասեր վարդապետի մը հետ, դարձեալ պիտի ներքի եթէ այդ ձեռով խօսէր Պատրիարքին և կամ անոր փոխանորդին հետ, Ռեթէոս Պերպլեւտի և կամ Յակոբ Գուրգէնի և նոյն իսկ Աքա- նաղի հետ. անոնք ի՞նչ պիտի զգային, պիտի հրճուէին և թերևս ինձմէ աւելի սի- րէին զինքը, բայց ինձի հետ այդ կերպով վարուելու համար գոնայիս toupet մը ունենալու է գիմացիտ, ինձի պէս մէկու- մը՝ որուն արտասանած բառերուն տաս- նին եօթը և զրոյսին կէսը օտար բառեր են անպատճառ:

Ամեն բանի մէջ մաքուր աշխարհաբարը կը հասկնամ, բայց այդ լեզուով սիրաբա- նելու համար մարդս . . . ներքինի ծնած ըլլալու է:

Աշխարհաբար՝ և ես որքան հեռու եմք:

Ես, մեծնիլ գիտնամ, հաւաքոյր բառը չեմ գործածեր երբ անգին պայլիկը կայ, պաշիկ՝ որ միս մինակ արտասանած ատենդ անգամ շրթներուդ վրայ հեշտին բան մը կ'զգաս, չէ՛:

* *

Մեր բրածը սիրահարութիւն չէր, այլ լեզուաբանական գասըթացք մը պարզա- պէս:

Իրաց այս յիմակը այլևս երկար չէր կըր- նար սեղի:

Յոգնած, զգուած, յուսահատ կ'զգայի ես զիս Վիրժինի այդ աշխարհաբարան յա- մառութեան հանդէպ:

Բայց ինչպէս խղի յարաբերութիւնները աղջկան մը հետ՝ որ հոգիկ չափ կը սիրէի:

Ա՛խ, Վիրժին, անիծեալ ըլլայ բու հա- յերէնի վարձապետը, կ'իմանա՞ս:

Կ'զգայի սակայն թէ այդ մաքուր հայե- րէնին առջև տեղի պիտի տար սէրս և պի- տի գար օր մը որ այլ ես կապ մը չպիտի մնար անոր և իմ մէջս:

Եւ ասանի ալ եղաւ:

Գիշեր մը, օգոստոսի այն աղւոր գիշեր- ներէն մէկը՝ որուն համարը Վասիլի եղբր-

ներուն վրայ բնակողները գիտեն միայն, բով բով նստած էինք իրենց ծովեզերայ սենեակին պատուհանին առջև:

Սենեակին մէջ մենկ զատ Վիրժինի մօ- ղաբոյրը կար, սուրը մնացած, պառաւ, հին աղջիկ մը, ճերմակ մազերով, որ բազմոցի մը վրայ կծկուած կը նիրհէր Մորիէտի թեւերուն մէջ: Ասոնցմէ զատ չեմ կարծեր որ իր ամբողջ կեանքին մէջ, ուրիշ մը թեւերուն մէջ կրցած էր ընկողմանիլ խեղճ մօրաբոյրը Վիրժինին:

Հոգեկոյր խօսակցութեան մը բռնուած կինը մենք անգին, պատուհանին առջև:

Գիշերներ կան, օգոստոսի գիշերներ մա- նուանդ, որ մարդս բանի բանատեղծ կ'ը- նեն, հետեաբար՝

— Ա՛խ, Վիրժինս, աղւոր Վիրժինս, գի- տնս ինչ կուզէի որ ըլլար . . .

— Ի՛նչ:

— Նախ կուզէի որ դուն իմս ըլլայիր, յետոյ, տարին ամբողջ օգոստոս ըլլար, ա- սանի ծովեզերայ բնակարան մը ունենա- յիք, սիրոյ րոյն մը, լուսինը՝ վերէն մեզ նայէր, և ծովուն ալիքները մեր ոտքերուն սակ փշուրէին, հեռուն՝ սոխակ մը ըլլար որ շարունակ երդէր, տունին մէջ մինակ ըլլայիր, օրը տաք ըլլար և զոյգ մը թեւերդ վիզս շրջապատէին, մազերդ՝ ուտերուդ վրայ թափուած՝ ծածկէին անոնց մերկութիւնը,

շունչս՝ շունչի խոնուէր, աչքերդ՝ աչքե- րուս մէջ ըլլային և շրթներս՝ շրթներուդ վրայ, ինչպէս կ'ընէին Ռօմէօ և Ժիւլիէթ,

Էջօիկ և Ապուլա, ըսէ՛, չէ՛ր ուզեր . . .

— Բանաստեղծութիւն այդ ամենը, ան- շօշափելին, վերացականը, անիւթը, ես, բիշ մը աւելի դրական, գիտնս ինչ կու- զէի այս պահուս, կազուրիչ բան մը, ինչ- պէս բայի սառնուշ . . .

— Այո՛, ես՛ Բալ ըլլայի, դուն՝ Սառնուշ . . .

— Բայց ինչ կ'ըսես . . .

— Չէ՛, սխալեցայ, դուն՝ Բալ ըլլայիր, ես՝ Սառնուշ . . .

Ահագին քրքրով մը սկսաւ ինչպալ շըր- ջազեմտով բառարանս:

— Ինչու՞ կը խնդաս, ըսէ՛:

— Ինչպէս չի խնդամ, հոգիս, ըսածս չի հասկցար:

— Իրաւ, երբէք այդ անունները չեմ լը- սած, բայց անշուշտ սիրոյ հերոսներ են, ինչպէս Պոզ և Վիրժինէ, Պոսթ և Մարկրիթ:

— Կատակ կ'ընես:

— Հաւատա՞ ոչ:

— Բայց բայի սառնուշը ինչ կը նշա- նակէ չ'ո գիտեր:

— Չէ՛:

— Երբում ըրէ՛:

— Կ'երզումս:

— Բալի սառնուշ կը նշանակէ. . . կը նշանակէ:

— Երաւ ըսէ՛:

— Յիշնէլի solismurmas . . .

Այդ գիշերուանէն վերջ մէջ մ'ալ երեւը չեմ տեսած:

Բայի սառնուշ, հէ . . .

Յ. ԱՎՓԻԱՄ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Վեհափառ կաթողիկոս Խրիմեան Հայրիկ սիրալիբ ընդունելութիւն ըրեր է Պարսից Շահուն. Շահը խոստա- ցեր է մեծ աջակցութիւն ընել Պարս- կաստանի մէջ կազմուած Հայոց կըր- թական Յանձնաժողովոյն, որուն մի- ջոցաւ հայ դպրոցներ պիտի բացուին Պարսկաստանի կարեւոր կեդրոնները: Բնական է թէ Հայկական խնդ-

րոյ մասին ևս խօսքեր անցած գար- ցած են, բայց, կըսուի թէ, Ռուսա- կան քաղաքականութիւնը հայոց դէմ, չը գրգռելու համար գաղտնի պահուած են:

Պարսից Շահապէս վերջերս մեծ յաղթութիւն մը տարած է, Մահմա- տի Քուրտերուն վրայ՝ և գերի բըռ- նելով Մահմատ աղան, ասոր գլու- խը նիզակի անցնել տուած է հրապա- րակային դաս մը ըլլալու համար: Մահմատ աղայ այն նշանաւոր Քուրտն է որ վանայ և Ս. Բարթի- ղիմոսի շրջակայները, չըրած չա- րիքները չէ մնացած հայոց դէմ:

Հայ Լսարան-Թղթեցատուն ընկերու- թեան տարեկան Բնագ. ժողովոյ Դ. րդ. և Ե. րդ. նիստերը տեղի ունեցան յաջորգա- բար՝ անցեալ երկու կիսակն օրերը. ժողով- ը ձեռնարկեց Մայր-Դիւանի և Գործ. ժո- ղովոյ անցածն ընտրութեան. ահաւասիկ ընտրութեանց արդիւնքը:

- Մայր-Դիւանի անկամ ընտրութեան.
- Տ. Համբարձում Պերպրեան Ա. Առնեսպետ
- » Եւաբը Երեմանեան Բ. »
- » Յ. Մարգարեան Ա. Առնեսպետ
- » Թորգոմ Փափազեան Բ. »
- Գործ. ժողովոյ անկամ ընտրութեան.
- Տ. Սեղբաբ Օտապաշեան
- » Երուսնդ Աւագեան
- » Յակոբ Քիւրքեան
- » Արմենակ Կոկանեան
- » Արտաշէս Յովսէփեան
- » Կ. Չօբաբեան
- » Վ. Ալատին.

Չարունակութիւնը յաջորդ թուով:

ՉԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. Սեպտե- 6էն ի վեր Պոլիս մէկ կողմէն Հայոց ձերբակալութիւնները կը կատարուին միւս կողմէն արձակումներ տեղի կ'ու- նենան: Վերջին լուրերուն համեմատ հարիւր Հայ, գլխաւորապէս օտապա- շիններ, Պոլսէն արտաքուստ իրենց երկիրները զրկուել են: Ասոնց վրայ կ'սկսած կը ծանրանայ եղբր թէ խա- ներու մէջ յեղափոխականներ կը պա- հեն: Անցեալ շաբթու յիսուն հայ արձակուել են, բայց չատերը տակա- լին բանտը կը մնան, և նորեր կուգան մեկնողներուն անցը կը բռնեն: Հոկ- տեմբեր 23 թուականով հեռագիր մը կը ծանուցանէ թէ նախընթաց օրը, դեսպանական միջամտութեամբ, 40 բանտարկեալ ևս ազատուել են, ու արտաքուստ բերէն 60 հայ Պոլիս վե- րադառնալ արտօնուել են:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՍԿԸ ԷՖԷՍՈՍԻ, սուլ- թանին անձնական գանձուն նախա- ըստը հրաժարական տուած էր. բայց սուլթանը մեծապարգև ընծայներով պարտաւորեր է հայ պաշտօնատարը շարունակել իր գործը:

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Թ. ՅԱՍՈՒԼԵԱՃԵԱՆ
Ընկերական այն միջալայրին մէջ ուր կ'ապրին մարդիկ, հոն անոնք իբր ընկեր հանդէպ միմեանս պարտակա- նութիւն մ'ունին. այդ պարտականու- թիւնը երբեմն այնքան նուիրական կը դառնայ, որոյ մէջ վրանայն իսկ բա- րոյական ծանր պատասխանատուու- թիւն մը կը հրաւիրէ:

Ինչպէս որ մեր ընկերո՞վ կեանքը

ինչքը, ու պատիւը բունարարելու ըլ- լանք, ընկերական օրէնքը իբր յան- ցասօր մեղի կը պատժէ ու կը դատա պարտէ, նմանապէս երբ իբր ընկեր՝ կը զրանսը մեր կորուսեալ ընկերո՞ք օգ- նութեան փութալու, ընկերական օրէն- քին կը յաջորդէ այս անգամ բարոյա- կան օրէնքը՝ որ զմեզ պատասխա- նատու կընէ մեր խղճին և ժողովու- զին առջև. զօր օրինակ երբ կը տես- նես յիմար մը, որ շարունակ երկա- թուղոյ դժին վրայ կը ճեմէ, դժուար չ'է նախատեսել որ այն անձը օր մը պիտի յոյտտուի այդ ճամբուն վրայ: Նմանապէս երբ լրջալ չ'գիտող մը, ծովը կը նետուի մենք արգէն համոզու- ած կ'ըլլանք թէ նա իր գերեզմանը պիտի գանէ ալեաց տակ. և երբ կը տեսնուիք տաժանելի հիւանդութեամբ տառապող մը, որ չ'ինամուրդ այս կամ այն պատճառաւ, գրէթէ միշտ ապա- հովապէս կ'ընանք ըսել որ երկայն ժա- մանակ չ'պիտի վայելենք անոր ներ- կայութիւնը: Այս պարագաներուն մէջ ի՞նչ պիտի ըլլայ մեր պարտակա- նութիւնը՝ իբր մարդ: Անշուշտ դա պիտի ըլլայ յիմարը հեռացնել երկա- թուղոյ դժին վրայէն, չուրը նետուու- զին օգնութեան փութացնել լաւ լողորդ մը, և հիւանդին պիտոյքը հո- ղալ:

Մարդասիրական այս պարտակա- նութիւնը աւելի նուիրական և աւելի հարկադրի կ'ըլլայ երբ այն դժբաղդ- ներու անձին վրայ կը ճանչնանք վա- ղեմի բարեկամ մը, հին արհեստակից մը, որուն գեռ երէկ ձեռքը կը սեղ- մէինք, և սեղանին կը մանակցէինք:

Տիար Թ. Փաստալիանեան, հանրա- ծանօթ արքայաբն համանման կայու- թեան մը մէջ կը գտնուի այսօր հան- դէպ իր հիւանդաց բարեկամին և ար- հեստակիցին՝ Տիար Պէրիլեանի որդւոյն որ ծանրապէս հիւանդ է, որ երիտա- սարդ է, որ վաւակներ ունի, որ բը- ժիշկ կ'ուզէ, որ դեղ կ'ուզէ. ձգելը և չ'յիշատակենք հիւանդի մը սիրտ- ման համար երբեմն անհրաժեշտ եղող այլ և այլ սուարկաներու մասանց թուումը...: Հիւանդը հայր մ'ունի ծերունի և կին մը՝ արդէն վշտաբեկ, քանի մ'ամիս առաջ կորսնցուցած ըլ- լալով զաւակ մը:

Եւ ի՞նչ կ'սպասէ այս բաղձնաբարձը ընտանիքը Տիար Փաստալիանեանէն, որ երկրիս վրայ ուրիշ ոչ ոք ունի բայց միայն իր անձը: Մեծանուն արքիւ- րեան չ'սպասուիր ո՞չ փառանքաւոր ճամ- բաներու վրայ իմպիւստը յիմար մը ազատել ո՞չ չուրը նետուելով անխա- հեմ մը փրկել, ո՞չ ալ բազմատանջ հիւանդի մը անարը անորուն գիշերներ անցընել: Ո՛չ, իրմէ խնդրուածը սա է որ — և այս մասին կարծեմ թարգման ըլլալ ամբողջ Հայութեան զգացու- մին — հաճի քանի մ'օր յետաձգել իր ներկայացումը զօր — կը սիրենք հաւատալ թէ ազգարարեց իր արհես- տակիցին վիճակին անտեղեակ ըլլա- լով — ծանուցած է ի նպաստ հիւան- ճին ծանցուած ներկայացումին իբր երկու օր առաջ ներկայանալի:

Ո՞ր հայ կրնայ խորհիլ որ մեր այս խնդիրը լսելի չ'պիտի ըլլայ հայ և հր- բեմն հայր անձնաւորութեան մը կող- մէն, որ թերեւ տարածում և անդար- մանելի դէպք մ'արգիլած պիտի ըլ- լայ:

ՉՆՈՂ ՄԸ

— Տիրանակերտէն գրած են «Ին- զանդիտն»ին Սեպտ. 20/3 Հոկտ. Թը- ուով:

«Ինչիկ Տիրապէսիբրդի Անթոնիեան կարապետ, որ տարիներ առաջ անկի- ական եկեղեցոյ գլխաւոր իմաստ և երի- ցութեան պաշտօն ընդունած էր, ամ- սոյս սկիզբը կաթուածահար մեռաւ, հետաքրքրութեան պարագաներու մէջ: Հանդուցեալը պարտական մնացած էր քաղաքիս վաշխառուներէն Մկրը- տիչ և Կիրակոս Արփաճեան եղբարց, որք տոկոսը տոկոսին վրայ բարդելով ահագին գումար մը կը պահանջէին խեղճ երէցէն: Այս վերջինը տեղացի փաստաբաններէն Պօղոս Տ. Գարրիէ- եանի խօսքերուն խաբուելով, գտա կը բանայ, բայց զարմանքով կը տեսնէ որ վաշխառուներն ըստ օրինի գրա- ւած են իր սունն և ունեցած գոյքը: Երէցը կը գիմէ Առաջն. Տեղապահին, որ նախ չուզեր միջամտել, բայց յե- տոյ աղքեցիիկ մէկու մը յանձնարա- րութեան վրայ մի քանի պատուաւոր անձերու առջև երկու կողմերը կը հը- րուիրէ գործն հաշտարարութեամբ վերջացնելու նպատակաւ: Մերունի երէցը վաշխառուներու գոռում գո- չումին առջև չափազանց յուզուելով, գետին կիցնայ, ձեռքերն ու ոտքերը թուլացած. Անմիջապէս սունն կը փո- խադրուի և կը յանձնուի բժշկական խնամոց: Վերջապէս Տեղապահ հայրը կը յաջողի խնդիրը կարգադրել երէ- ցին փափաքին համաձայն: Մահուրնէն քանի մ'օր առաջ, երախտագէտ ծե- րունին իր քով կը հրաւիրէ Տեղապահ հայրն և կը խնդրէ որ արտօնուի Ս. Հաղորդութիւն առնել և Հայ. եկեղեց- ւոյ ծէսովը թաղուի: 1000 զրուշ ալ կտակ կընէ Ս. Կիրակոս եկեղեցոյ: Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ նախագահութեամբ Տեղապահ Հօր և հանգուցեալ երէցը թաղուեցաւ պարզ աշխարհականի մը պէս»:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

ՀԱԿԻԹ. — 1900 Յունվար ամիսէն սկսեալ Եղիպտոսէն 72 միլիոն հաւ- կիթ օտար երկիրներ արտածուած է: — ՍփինքՍ, Ի Դեղ. ԱՐԱՆԸ. — Աղքե- անդրիոյ «Սփինք»ի գեղարանին տէ- յը իր պարտապահանջներուն հետըզ- հետէ աւելնալը տեսնելով, անցեալ- ները յանկարծ գեղարանին ապակի- ները և գեղամանները կտորած էր: կը կասկածուէր որ մի գուցէ խելքը թուցուցած ըլլայ ի վերջոյ, Տօք. Վա- լուսօրուի բժշկական քննութիւն մը կատարելով սեէ յիմարութիւն և կամ մնային տկարութիւն գտած չէ. վայր- կենական մարքի տագնապ մըն է որ թերեւս յառաջ եկած է իր պարտա- պահանջներուն ըրած ճնշումներէն:

«Ժուրնալ տիւ Գէր» կը գրէ թէ «Սփինք»ի գեղարանի տէրը իր նախ- նիքներուն օրինակին հետեւի ուղած է. որովհետեւ հին ատենը երբ որ Յոյ- ները ինքզինքնին յաղթուած կը տես- նէին Պարսիկներէն, փոխարէն քաղա- քը ողջ ողջ յանձնուլ կ'այրէին ու կը քանդէին. նմանապէս Պ. Սփինք» իր գեղարանին գոյքերը պիտի յանձնէ իր պարտապահանջներուն, կտորելէ վերջը: ՅՐԱՆՍԵ ԲԷՆ ԼԵՉՈՒՆ. — Կիմանանք թէ՛ Քրանսերէն լեզուն վերջնականա- պէս պիտի ջնջուի տեղոյս կառավա- րական գալորոցներէն և դասերը պիտի աւանդուին անգլիերէն լեզուով:

ՇԱՐԳԻՅԷ. — «Շարգիյէ»ի շոգենա- վին ընկերութեան արձու ապահովագրա- կան ընկերութեան կողմէն 7000 ոսկի վճարուել է «Խոյիվալ» շոգենաւա- յին ընկերութեան՝ որուն կը պատկա- նէր «Շարգիյէ»:

ՍՈՎ. — Աղքեքանդրիոյ մտտ Մաթ-

րու հա գիւզը սով ծաղեր է, ու տե- րացի Պէտուիները քանի մ'օր անօթի տոյցներ են. Աղքեքանդրիոյ մահմե- տական փաճառականները իբր օգնու- թիւն քորին զրկել են սովից:

ԿՐՏՈՐԱՆԻ. — Գահիրէի կայարանը անկի պիտի ընկարձակուի. և Պ. Ժիւուարի պիտի յաջորդէ Մաթօր Սթրանժ ձէյանիին, իբր նախագահ երկաթուղոյ վարչութեան:

ԿԻՉԷԻ «մի գէն» ամեն օր բաց է ժամը 9էն 4, ի բաց առեալ երկու- շաբթի օրերը:

ԿՐԷՏԷԻ ԱՊԱԳԱՆ

Յունաստանի Երկրիտ իշխանը որ քանի մը օրէն Լոնտոն պիտի գտնուի, Գորէնհակի մէջ յայտարարած է թէ կը վախնայ որ մի գուցէ Կրէտէի ժո- ղովորդը ոտքի երնէ, եթէ Կրէտէ մի անգամ ընդ միշտ Յունաստանի հետ չ'միանայ, և կամ եթէ կատարեալ անկախութիւն չ'տրուի իրեն:

Խորհրդարանն ու Կրէտացիներն ալ համամիտ են իշխանին:

Իշխանն այլ ևս, փոխելու մնալ չ'ուզեր. բայց ամենայն սիրով պիտի շարունակէ իր պաշտօնը, ընախանա- բար, իբր կառավարիչ, երբ Կրէտէն կ'ստանայ իր անկախութիւնը:

Այն ատեն իշխանը քանի մը Դանի- այններ պաշտօնի գլուխ պիտի անցնէ, որոնք անշուշտ վարչագէտ և կարող մարդիկ պիտի ըլլան:

Կը կարծուի թէ՛ Ռուսիան և Անդ- դիան, և հաւանականաբար Յորանսան ու Իտալիան, պիտի օգնեն Երկրիտ իշխանին:

Գ Ի Ի Տ Մ Ը

Սիկիլիացի ազնուական դասակար- գէն զիտուն մը, Պարոն Ալէսանտրա՝ ծովային փոթորկին դէմ նոր զիւտ մը հնարած է. գործնականապէս ար- տագրած արդիւնքը մեծ է. թէ ճամ- բորդները և թէ ապրանքները վախ չը պիտի ունենան այլևս ծովի ալիք- ներուն զոհ երթալու:

Մինչև ցարդ ծովային փոթորիկ- ներու դէմ՝ նաևերը պաշտպանող չը- նորհքով գործիք մը գտնուած չէր. և զիտէր թէ սրբան հազարաւոր հո- զիներ կորած են ծովերու յատակը:

Պ. Ալէսանտրա կուգայ այդ պա- կասը լեցնել իր հնարած գործիքովը որ շատ պարզ է:

Պ. Ալէսանտրայի զիտը կը կազ- մեն հոժկու և դիմացկուն չուաններ կանեփով շինուած. այդ չուանները գառչուքի և կապիկի խառնուրդով լաւ մը ձեփուելէ վերջը, իրարու ըով բերուելով ատոնցմէ տեսակ մը պատնէշ կը շինուի և նաւուն չորս կողմը ատով կը շրջապատուի. նաւը այդ շրջանակին մէջ է որ պիտի ճամ- բորդէ:

Որքան կատաղի ալիք ըլլայ՝ այլ եւս նաւուն վրայ չը պիտի կրնայ յարձակիլ. որովհետեւ այդ պատնէշը զինքը պիտի պաշտպանէ ալեաց դէմ. ալիքները ուղղակի այդ չուանէ պատ- նէշին պիտի բաղխին:

Հավրի նաւահանգստին մէջ՝ ծո- վային վարչութեան հսկողութեան ներքե քանիցս փորձեր կատարուե- ցան. հոն մեծ նաւ մը գրուեցաւ ծո- վուն ամենէն կատաղի ժամանակը՝ այնպիսի հոսանքի մը մէջ ուրիշ ունէ նաւ չի կրնար անցնիլ. այդ նաւը շրջապատուեցաւ չուաններու պատ- նէշով և տասն և հինգ օր շարունակ դիմադրեց ծովու կատաղութեան դէմ, առանց վնասուելու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

(Շար. թիւ 44էն եւ վերջ)

Ես, թերևս չափազանց յոռետես եմ ըսուի, կը յարե Սըր ճոն Լուպոզ, այս առածը մէջ բերելուս համար: Հըրջի ալ, սակայն, նոյնը կը վկայէ:

Քայց շատ սխալ է արգարի Լօրի կարծիքը երբ կ'ըսէ. «Բնութեան գազափոխութեան մէջ ոչ միայն մտած չենք, այլ անոր զբոյժը անգամ չենք մտնեցած»: Ո՛վ կ'ընայ ուրանալ եղած այնքան օդատար ու հրաշալի գիտութեան գոյութիւնը:

Գիտութիւնը միմիայն նիւթակա՞նով չէ որ օդատար կ'ըլլայ ազգին. կը բարձրացընէ ու կը զօրացնէ նաև ազգային ու անհատական նկարագիրը:

Գիտութիւնը վերջապէս, վաճառականական, բուսաբանական, կենդանաբանական, աշխարհներուն մեծ ծառայութիւններ մատուցանելէ զատ, ինքզինք մարդուն երջանկութեան ու բարօրութեան նուիրած է: «Գիտութիւնը, իրեն անձնուէրները» կ'ըսէ Ֆարբար, « յոգնած են ո՛չ թէ բնասպետութիւնները զօրացնելու, պայտաներու շուքը աւելցընելու, այլ՝ մարդը երջանկացնելու, անոր աշխատութիւնը չափաւորելու, վիշտը մարելու համար: Հին ատենները մարդիկ տրգէտ՝ կէս մերկ վիճակի մէջ, ձերմկալու աստիճան տաքցած երկաթը զանգելու համար՝ հրաբորբոց հնոցին առջև կեցած կ'աշխատէին. հիմա՛, գիտութիւնը օդի պէս անտեսանելի կերպով կ'աշխատցնէ մեքենան:

Ճառագայթներն անգամ՝ ուզածին պէս կը գործածէ գիտութիւնը. անով մեր սիրելի բարեկամներուն դէմքը կը նկարէ (ֆօթօկրաֆ): Ո՛չ ապաքէն ինքն հանքագործին կեանքը փրկեց՝ անոր ձեռքը Ապահովութեան Կանխեղ տարով:

Անարդար երբ իր ճապուկ ձեռքերով աչքին շղային շրջագծէն կտոր մը կը կտրէ, հիւանդը ցաւ չզգար, որովհետև Գիտութիւնը իր զգայագիրները տուած է: Դարերու միջոցին ազգերու քրտինքով շինուած բուրգերը չցուցնին գիտութիւնը. մատնանիշ կ'ընէ փարոսը, շոգեխաւը, երկաթուղին ու հողագիրը: Գիտութիւնը կոյրին՝ աչքը, խուլին՝ ականջը բացաւ: Երկարեց կեանքը, պակասեցոց վտանգը, իշխեց յիմարութեան, կոխտեց հիւանդութիւնը: Սիրեցէք ուրեմն ստույգները — Գիտութիւնը: Գիտութիւնը իր ուսումներով կը կրթէ բանականութիւնը, կը վառէ երևակայութիւնը. կը կռէ ու կը զարնէ միտքը, կը կերակրէ ու կը կշտացընէ զայն:

(Բլէժրոս օֆ Լայֆ)

ՎԱՀԷ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հին ատենները՝ տղու մը դաստիարակութեան համար՝ մինչև անոր չափահաս տարիքը 230 ֆրանք կը բաւէր. մեր օրերը այս գումարը գըզուրոցական գրքերուն անգամ չ'ըբաւեր:

—Շերակոյի մէջ աշխմիևիտիէ (պաղլէզարար) առաջին տունը պիտի շինուի նոյն քաղաքին ամենաբանուկ փողոցներէն մէկուն մէջ: Շէնքին բարձրութիւնը պիտի ըլլայ 64 մէթր, և պիտի բաղկանայ 17 յարկէ:

—Հեռագրին սկզբունքը Սկոտլանդի մը գտաւ 1753ին, անոր գործածութեան մտաւորապէս 100 տարի(1792)

առաջ, զոր յօդուածով մը բացատրած էր «Արօղս Մակազին»ին մէջ:

—Բոլլար Վիրակի հեռագրի արագընթաց գրութիւնը՝ այս գարու գըլուխ-գործոցներէն մին է: Այնպէս որ մէկ ժամէն 70,000—122,000 բառ կարելի է զրկել:

—Գօթրատօի (Միացեալ-Նահանգք) մէջ գետնուղիի մը շինութեանը ձեռնարկած են, որ աշխարհի գետնուղիներէն ամենէն երկայնը պիտի ըլլայ: Միջին հաշուով լեռան մակերևոյթէն 840 մէթր վարէն սկսեալ պիտի փորեն գետնուղին: Կ'ըսուի թէ եօթ տարիէն պիտի լինայ և ծախքը հարիւր միլիոնը պիտի անցնի:

—Մանչի ծովին վրայ պատահած փոթորիկները հանդարտեցնելու համար մեծ քանակութեամբ ձէթ գործածուած է: Այլքները կը բաղկանին Ֆոլքէսդոն նաւահանգստին եղբրին ու նաւերը դժուարաւ կը մտնէին նաւամատոցէն ներս. մեծ քանակութեամբ ձէթ ծովը թափելուն պէս ծովը կը հանդարտի:

—Կ'ըսեն թէ՛ հայիւ եղած է որ՝ եթէ երկրագունդիս խրաքանչիւր բընակիչը գիտնար իր պէտքերը լնուլ, և փոխանակ քաղաքներուն մէջ խընելու՝ երթար երկրագործութիւնը ընէր, իրեն պէտքերը գոհացնելու համար երեք չորս ժամ՝ միայն պիտի աշխատէր օրը: Աշխատութեան խընդիրին լուծումը ուրեմն աւելի շուտ պիտի լուծուէր պարզ և առողջաբանական սովորութիւններով, և երկրի մշակութեամբ:

—Ըստ ՊՊ. Գրիօր և Ըրըուայո տը Գըլվանտի (Միացեալ - Նահանգք) գրութեան, մէկ վայրկեանէն 4 հազար բառ կարելի է հեռագրել: Ասկէ տասն ամիս առաջ ամերիկեան կառավարութիւնը փորձած է այս գրութիւնը և 3 հազար բառ զրկած է այդ փորձի վայրկեանին:

Le Gérant J. MUNIER

Տպաւ. «Միութիւն». — Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրածանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եղիպտոսի գործակալնալ, Տ. Մ'կրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութենէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանոզ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ դրամական և ֆուէտի Ֆոնսիէի, Վիլ աը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, դանձումներ, Սմաական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւպոտի վրայ փաստարան Ռարթաքիի դրասենակը:

Թղթակցութիւն և կամ դրամ վըրկել հետեւալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դաստիկոնը:

Կը բժշկէ բերնի և ակույի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵՆԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՅ ԵՆ ՏԻՓԱՆՅ

ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիմի մեծ պողոսային վրայ Տայիւայի Սանիթի դիմացը, նախկին եկեղեցական գործիներու վաճառատներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմու Պատ. յաճախողները, գործի մարտութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտահանութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթատով:

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳՈՋԱՆՁԵԱՆ

Շարա Ապու-Սապահ

Նիւու-Տեիվեռսի իրեղաբանի դիմացը.

Օդատուն ու զուարճայի դիւք. մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու սննդարար կերակուրներու զանազանութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով ահա՛ Գազանճեան եղբարց ճաշարանը:

Ո՛վ՝ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ. ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադիրներ, նամակազուրկներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևլն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք եւ ճաշակաւոր տպագրութեամբ:

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ